

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ֆ Ի Ռ Ո Ւ Ս Ի .

Ջայս երկոսին հատուածս, որ ի ներքոյ, արձակ թարգմանութեամբ յեղեալ մեր ի հայ՝ ի Շահնամէն՝ այն է ի թագաւորաց մատենէն Պարսից, առաջարկեմք ընթերցողաց որպէս խուն ինչ ճաշակ դիւցազներգութեան հանրահռչակ վիպասանի նոցա, հանդերձ համառօտ կենսագրութեամբ նորա *).

Մեծ վիպասանն Աբուլ—Ղասէմ ծնաւ ի տասներորդ դարու ի գիւղն Թուս Խորասանոյ, որ և ապա ուղղեալ զանուն ծննդավայրին՝ փոխելով զաղաւաղեալն Թուս ի հինն և յուղիղն Քրդուս կամ Քարդուս (պարտէզ — paradisus) մականուանեցաւ Քրդուսի այսինքն Պարտիզեցի կամ Դրախտեցի, և ոչ «որդի դրախտի» կամ «դրախտային», որպէս սխալ թարգմանենն ոմանք, սխալ արտասանելով և զանունն Ֆրէդ—տէ կոչելով:

Եկեալ նորա ի Ղաղնէ քաղաք աթոռանիստ Մահմուդ արքայի Ղաղնէ-վեան, յարեցաւ յարքունի բանաստեղծապետն Բուդեգի, որոյ սկիզբն էր արարեալ գրել զՇահնամէն, և ի սուղ ժամանակի բնատուր ձիրք Քրդուսույ ետուն նմա մեծապայծառ փայլել ի քանքարաւոր քերթուածս, Սմին իրի և ի մեռանել բանաստեղծապետին, ինքնին և եթ յառաջ մատուցանէր զգործ մեծի վիպասանութեան Շահնամէին խմբագրելով յանգիր և ի գրաւոր զրուցաց, յարքունի քարտիսից և ի գուսանական երգոց, նա մանաւանդ ի նախնի յիշատակարանաց, որ գտանէին առ մնացորդս արեւապաշտ Պարսից Գե—թէ կոչեցելոց, Ընդ որ կարի հաճ և հաւան գտեալ և սատար հովանաւոր՝ ուսումնասէրն և նախանձայոյղն հայրենի փառաց Մահմուդ արքայ, որ և իսպառ եհար զԱրաբացիսն և ընդարձակեալ հաստատեաց զինքնիշխանութիւն իւրոյ հայրենի աշխարհին, խոստացաւ ի վախճան գործոյն փոխարինել զմէն մի ի տողից արքայապատում մատենին կշիռ հաւասար ոսկւոյ, Ուստի խրախուսեալ և վառեալ աշխոյժ ոգերուիս և հանձար բեղմնաւոր անմահ վիպասանին, անհաժեմատ երկասիրութեամբ թեւակոխեաց ոգել հանգոյն Հոմերականին զվիպական պատմութիւնն, երգելով սքանչելի իմն անսպառ խանդիւ զփառս դիւցազնայինս և զարկածս յեղյեղուկ բաղդի հայրենեացն, ի վաթսուն հազար տողս հանձարեղ բանահիւսութեան, ի

(*) Ընտիր եւ գեղեցկագոյնն գրչագիր — պատկերազարդ Շահնամէից պահի ի գանձարանին արքունի ի համարաբանոցի մատենից Թաղաւորաց, Գտանին նոյնպիսի թանկագինք առ իշխանս Պարսից, Բստակագոյնքն ի տպագրելոց են տպեալքն ի Էնդիկս, այլ անշուք եւ առանց նկարակերտ յօրինուածոց, եւ ահագին ստուարութեամբն արժէ մէն մի առաւել քան դրամսն ըուրլի արծ. վիմագիր տպագրութեան պատճառաւ:

դուտ և հարազատ պարսկապահալիկ լեզու, որով ոչ միայն հայրենի աղ-
քատին լեզուան մրցէր և յաղթէր արարախօս — պարսիկ բանաստեղծից
ժամանակին, այլ և յետս անդրէն մղէր զօտարամուտ արարականն ճոխա-
պանծ լեզու, որ շնորհիւ գերիշխանութեան մարգարէաբարբառ Ղուրանին,
ջնջել և փոխարինել բարուրէր զլեզուն գեղեցիկ իւրոց հայրենեաց, իբրև
բարբառ պիղծ արեապաշտ — կրակապաշտից և անճաճ անարժան շրթանց
Զէգիդ — Իսլամաց (նոր ուղղափառ հաւատացելոց)։

Սակայն Մահմուտ յաւարտ մեծագին գործոյն դրժեաց զխոստումնն ար-
ժանաւոր և փոխանակ ծանրագին ոսկւոյ կշռեաց արծաթ թեթեւագին ի
տրիտուր անգին վաստակոց առնն մեծի, որոյ ոչ միայն անվթար կացութեալ
էր զգանձս հնութեան հայրենեացն ի մոլեռանդն Արաբացւոց, որ ի հուր
և ի ջուր սպառէին որ ինչ ոչ էր ի բարբառ մարգարէին (Ղուրան), այլ և
ահագին քանակութեամբ վսեմ քերթուածոցն՝ թէպէտ առասպելախառն՝
յաւերժացոյց զփառս հայրենեաց և ընդ նմին զանուն Մահմուդայ, Ուստի
և առաւել քան ընդ արժանաւորութիւն վարձուցն՝ ընդ անազնութիւն
ապիրատութեանն ի խոր խոցեալ, հրոյ ճարակ ետ զամենայն գովասանա-
կանսն իւր ուրոյն յօրինեալ զՄահմուդայ, և կցեաց ի վերջկոյս մատենին
կծու իմն երգիծարանութիւն ի դէմս նորա, որ ունի սկիզբն այսպիսի.
« Նթէ արքայ էր ի մօրէ արքայածին, ոսկի և արծաթ հասանէր ցարձս
իմ » և այլն, որով յանդիմանելով զանազնիւ ծնունդ նոցա, բողոքէ եպե-
րելով զանարդար արարս նորա ըստ այնմ, եւ ընկեցեալ զարծաթն, գնայ
մեռանի ի Թուս առ անհնարին տրտմութեանն, Իսկ Մահմուդ ստրջացեալ
առաքէ զհետ նորա զկրկնապատիկ վարձուցն, այլ անագան, և գրաստքն
զանձարարձք ժամանեն ի Թուս յաւուր թաղմանն, զոր մահագին նորա
համարեալ՝ ըստ օրինի շարիաթին բովանդակ ծախի ի շինութիւն կամրջին
յանուն Փրդուսւոյ՝ ի վերայ վտանգաւոր գետոյն մերձ ի Թուս, և լինի
այնու կրկին վարձք բարեգործութեան անմահ վիպասանին, մին ի կենդա-
նութեանն և մին ի մահուանն, միովն անմահանայ յընթերցողաց մատենին՝
բացագանշութեամբս — Նեցցէս Փրդուսի, և միւսովն յիշի յանցաւորաց
կամրջին՝ օրհնութեամբս — ողորմի՛ Փրդուսւոյ։

Արդարեւ արժան էր փոխել ի հայ զընտիր ընտիրս ի քերթուածոց մեծի
վիպասանին, զոր յիրաւի բանասէր — մատենախօսք եւրոպացիք միարանին
գովել, մանաւանդ զհրաշալի նկարագիրս պատերազմաց և զվէպն չնաշխար-
հիկ Փրանգիսի (Հրանգէսի) մօրն Քայ — Խօսրովու (Մեծին Պիւրոսի),
զորմէ ասեն քննադատքն եւրոպականք, « Ապաքէն ակնյանդիման երեւի թէ
ո՛րպէս ոգին ասիական վաղ ուրեմն գիտէր ի վեր հանել և ներհուն ճար-
տարութեամբ նկարել զամենաազնիւն՝ զամենախորինն՝ և զամենաքնքոյշն
գորովագութ զգացմանց հոգւոյ, — Սմին իրի սրտի մտօք ընթեռնու
ոգևորի, յափշտակի ընթերցողն պարօսիկ, և է որ ի բերան առեալ զբովան-
դակութիւն ընտիր հատուածոցն, զարմանալի ոգելից առոգանութեամբ
պատմեն անգրագէտքն և գործաւորքն անգամ ուամիկ, յորժամ գործեն

զգործ պատշաճ ունկնդրութեան. ի սոյն մաշեն և բազումք ի գեղջկաց զերկայնութիւն ձմերային գիշերոյ, առհասարակ արք և կանայք և մանկունք անգամ ախորժանօք անձանձիր լսելով զսքանչելի գործս Ռուստէմայ Սագճկի (Սաջաստանցւոյ կամ Սագաստանցւոյ) և զհրաշալիսն Բէշ նժուգի նորա՝ նմանահանգոյն արծուենման Սեաւին գեղեցկի մերս Արտաշիսի, զառասպելախառն այլաբանութիւնս քաջամարտ — դիւարաղ Հուշանգի՝ հանգոյն մերս վիշապաքաղ Վահագնի, զգիցանուէր վեհութիւնս արգարագատն Անուշիրուանայ (Անուշաւանայ), նա մանաւանդ զհրաշապատում վէպն Քրանգիսի, լի չքնաղ նահատակութեամբք առաքինութեան և կենդանի նկարութեամբք, այլովքն հանդերձ, յորոց առ այժմ զայս երկու դոյզն հառուածս և եթ առ ձեռն պատրաստ ունիմք ի լոյս ընծայել, զընտրելագունիցն թարգմանութիւն թողլով այլում նուագի:

Սամուէլ Գիւլշադեանց.

1.

Ի ՄԱՀ ՔԱՋԻՆ ՍՖԱՆԴԵԱՐԱՅ (ՍՊԱՆԴԱՐԱՅ).

Ժամ է արդ քամել բաժակ մի անապակ անուշահամ գինւոյ՝ մինչդեռ շունչ քաղցրասիք գարնան բերէ մեզ զհոտ անուշից հովասուն լերանց, Ծաղիկք գարնանայինք պսակեն զսաղարթս անտառախիտ մայրեաց և բլուրք շողան ի փայլիւն հրաշէկ կակաչաց և ի նարօտ պէսպէս երանգաց, Հրճուէ սոխակ գեղգեղելով ի ծոց սիրանոյշ վարդենեաց և գոհար վարդ փթթէ պշրանօք ի լուր երգոց խօսնակին:

Եւ լիցի՞ն արդեօք այլ ևս լսելի հեշտալուր դայլայլիկք նորա, յորժամ բաժակն վարդագոյն՝ վարդենւոյ ծածկեսցի մարգարտաշար քաղցրահոտ ցօղով գիշերոյ. — Ո՛չ. աւանիկ յառաջ խաղայ ամպ մռայլ՝ հալածական վարեալ ի փոթորկալից հողմոյ . . . Ոչ է այդպէս՝ յորժամ նստեալ խօսնակն ի գեղուղէշ փունջ վարդենեաց՝ երդէ զսէր իւր խանդակաթ. Ո՞ գիտէ զի՞նչ նա խօսի արդ . . .

Նա ողբայ զՍպանդար. զՍպանդարն բարձեալ կապտեալ ի փառաց անդստին ի մատաղատունկ տիոցն երիտասարդութեան, Նա պատմէ քեզ յորդելով զհինաւուրց անցից անցելոց, զոր սովոր էին նախնիք մեր պատմել հարցն մերոց:

2.

ՄԵՆԱՄԱՐՏ ՔԱՋԻՆ ՍԱՄԱՅ.

Ընդ երևիլ հզօր արքային Մանուշէհրի (Մանաճիհրի), անկաւ անդէն որդի նորա Սամ ի վերայ երեսաց և երկիր եպագ նմա, Յարեաւ հայրն օգոստափառ ի գահոյիցն փղօսկրեայ և սփռեցին կայծակունս հրոյ մեղեսիկք և տպագիոնք ականաղարդ թագի նորա, Զգեալ զձեռն իւր շնորհալից, նստոյց առ իւր զՍամ, և ի հարցանել հօրն ստիպաւ՝ թէ զի՞նչ եղեն գայլքն մարդախոշօշք՝ խուժադուժքն Մազանդրանեայք (Արկանք), ետ